ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ
ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

«10» հոկտեմբեր 2024թ. **ք. Արտաշատ**

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №

Մենք՝ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի արևմտյան տարածքային կենտրոնի աշխատանքային օրենսդրության վերահսկողության բաժնի ավագ տեսուչներ՝ Տաթևիկ Համբարձումյանը, Լիլիթ Ավագյանը և Գոհար Անտոնյանը, ՀՀ Արագածոտնի մարզ, Աշտարակ, Նարեկոացու /Շ/ 61 հասցեում գտնվող «ԱՇՏԱՐԱԿԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ում (այսուհետ՝ Ընկերություն) (ՀՎՀՀ՝ 05002894) Աշխատանքային օրենսգրքի 84-րդ, 105-րդ, 139-րդ և 142-րդ հոդվածների պահանջների պահպանումը պարզելու նպատակով 2024 թվականի հուլիսի 31-ին հարուցված թիվ Վ/Դ-390 վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված փաստական տվյալների ուսումնասիրության արդյունքում պարզեցինք, որ Քրիստինե Սարգսյանի 5 հերթապահությունները առանց նախօրոք ծանուցման փոփոխվել է 2-ի, որի համար չի վճարվել տուժանք ծանուցման յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար՝ խախտելով Աշխատանքային օրեսգրքի 115-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը:

Քրիստինե Սարգսյանը համատեղության կարգով միաժամանակ աշխատում է նույն գործատուի («ԱՇՏԱՐԱԿԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ) մոտ որպես կանանց կոնսուլտացիայի տեղամասային բժիշկ մանկաբարձ-գինեկոլոգ՝ 09:00-ից մինչև 16:00-ն և մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքում հերթապահող բժիշկ մանկաբարձ-գինեկոլոգ՝ 18:00-ից մինչև 09:00-ը (չպահպանելով

0046 ՀՀ ք. Երևան, Շենգավիթ, Արարատյան 26
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ՝ 8107

աշխատաժամանակի նորմալ տևողությունը), խախտելով Աշխատանքային օրենսգրքի 139-րդ հոդվածի 5-րդ մասը:

Աշխատանքային օրենսգրքի 139-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ տարբեր գործատուների կամ **նույն գործատուի մոտ երկու և ավելի աշխատանքային պայմանագրերով աշխատողի ամենօրյա աշխատաժամանակի տևողությունը (ներառյալ՝ հանգստի և սնվելու համար ընդմիջումները) չի կարող անցնել օրական 12 ժամից:** Սույն մասով սահմանված պահանջի կատարման պարտականությունը տարբեր գործատուների մոտ երկու և ավելի աշխատանքային պայմանագրերով աշխատելու դեպքում կրում է աշխատողը, բացառությամբ այն դեպքի, երբ գործատուն աշխատողի կողմից գրավոր տեղեկացվել է աշխատողի համատեղությամբ աշխատելու վերաբերյալ:

Տվյալ վարչական իրավախախտման համար պատասխանատվություն է նախատեսված Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասով:

Խախտման համար պատասխանատու է՝

1. Կարինե Սուրիկի Մինասյան,
2. Աշխատանքի վայրը, կազմակերպության գտնվելու վայրը- ՀՀ Արագածոտնի մարզ, Աշտարակ, Նարեկացու 61,
3. Զբաղեցրած պաշտոնը – «ԱՇՏԱՐԱԿԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ի տնօրենի պարտականությունները կատարող,
4. Բնակության վայրը– ՀՀ Արագածոտնի մարզ, Աշտարակ, Սասունիկ, 16փ., տուն 8
5. Խախտման համար պատասխանատու անձի անձնագրային տվյալները- ն/ք AV0221437, տրված 18.05. 2022, 029-ի կողմից:

Իրավախախտողի բացատրությունը_____

_____

(իրավախախտում կատարած անձի ստորագրությունը)

ՀՀ ԱԱՏՄ արևմտյան տարածքային

կենտրոնի աշխատանքային
օրենսդրության վերահսկողության բաժնի
ավագ տեսուչ Տաթևիկ Համբարձումյան

ստորագրություն

ՀՀ ԱԱՏՄ արևմտյան տարածքային
կենտրոնի աշխատանքային
օրենսդրության վերահսկողության բաժնի
ավագ տեսուչ Լիլիթ Ավագյան

ստորագրություն

ՀՀ ԱԱՏՄ արևմտյան տարածքային
կենտրոնի աշխատանքային
օրենսդրության վերահսկողության բաժնի
ավագ տեսուչ Գոհար Անտոնյան



ստորագրություն

Արձանագրությունը ստացա

_____

(իրավախախտող անձի ստորագրությունը, ստացման ամսաթիվը)

_____

Արձանագրությունը ստանալուց և ստորագրելուց հրաժարվելու մասին նշում

_____

Նշում արձանագրությունը պատվիրված նամակով ուղարկելու և ստանալու ծանուցման մասին,

_____ _____ _____ _____ _____ _____ _____ _____ _____ _____ _____ _____ _____ _____ _____ _____

_____

(ուղարկելու ամսաթիվը, անդորրագրի փոստային ծանուցագրի համարը)

Ծանոթություն

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 267 հոդվածի համաձայն՝ վարչական պատասխանատվության ենթարկվող անձը իրավունք ունի ծանոթանալու գործի նյութերին, բացատրություններ տալու, ապացույցներ ներկայացնելու, միջնորդություններ հարուցելու, գործի քննության ընթացքում օգտվելու փաստաբանի իրավաբանական օգնությունից, ելույթ ունենալու մայրենի լեզվով և օգտվելու թարգմանի ծառայություններից, եթե չի տիրապետում այն լեզվին, որով տարվում է վարույթը, գանգատարկելու գործով որոշումը: Վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննվում է վարչական պատասխանատվության

ենթարկվող անձի ներկայությամբ: Գործը կարող է այդ անձի բացակայությամբ քննվել միայն այն դեպքերում, երբ տվյալներ կան գործի քննության տեղի և ժամանակի մասին նրան ժամանակին ծանուցելու վերաբերյալ և եթե նրանից միջնորդություն չի ստացվել գործի քննությունը հետաձգելու մասին: